

Ոչ գրոյական գնաճի հետևանքները բաց տնտեսության պայմաններում

Քամայան Հայկ

ՀՊՏՀ ասպիրանտ

Ամփոփում: Աշխատանքը ներկայացնում է կայուն վիճակում ոչ գրոյական գնաճի հնարավոր ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների վարքագծի և բնութագրիչների վրա բաց տնտեսության պայմաններում: Մի գնի օրենքից շեղման պայմանը թույլ է տվել ներկայացնել նաև ներմուծվող ապրանքների գնագոյացման հավասարումը ոչ գրոյական գնաճի պարագայում, ընդ որում՝ ըստ ենթադրության ներմուծող ֆիրմաները ապրանքների վերաբաշխման հետ կապված կրում են նաև աշխատուժի ծախսեր: Վերջինս նշանակում է, որ մակրոտնտեսական համակարգի վարքագիծը որոշվում է ինչպես տեղական, այնպես էլ ներմուծված ապրանքների գների հարաբերական ցրվածքով:

Ոչ գրոյական գնաճ, գների ցրվածք, դրամավարկային քաղաքականություն:

Ներածություն

Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը նկարագրող ընդհանուր հավասարակշռության մոդելներ կառուցելիս շատ հեղինակներ անուղղակիորեն ընդունում են երկարաժամկետ հատվածում գնաճի զրոյական մակարդակի ենթադրությունը: Սա ապահովում է տնտեսությունը նկարագրող տարբեր առնչությունների վերլուծական պարզ ներկայացում, սակայն հաշվի չի առնում այն որակական և քանակական փոփոխությունները, որոնք առաջանում են փոխանցումային մեխանիզմում և որոնք կարող են էական լինել քաղաքականության իրականացման տեսանկյունից:

Վերջին շրջանում մի շարք հեղինակներ անդրադարձել են նշված խնդրին՝ ներկայացնելով ոչ զրոյական գնաճի հետևանքները փակ տնտեսության համար[2]: Հիմնական արդյունքները վկայում են մակրոփոփոխականների վարքագծի փոփոխություններ, ինչպես նաև քաղաքականության որոշակիության(determinancy) պայմանների փոփոխությունների մասին:

Ընդհանուր առմամբ ոչ զրոյական գնաճի ազդեցությունը ներկայացվում է տնտեսության առաջարկը ներկայացնող հատվածի վրա: Անվանական գնային կոշտությունների պարագայում գոյություն ունի գների որոշակի անհավասարաչափ բաշխվածություն տարբեր ֆիրմաների համար: Ընդ որում՝ հարաբերական գների անհավասարաչափ բաշխման հետևանքները քանակական արտահայտությամբ աճում են գնաճի մակարդակի աճին զուգահեռ:

Դրական երկարաժամկետ գնաճի դեպքում հարաբերական գները ժամանակի ընթացքում նվազում են, ինչը նշանակում է, որ առաջանում են տարբերություններ գների ճշգրտում իրականացնող և տվյալ պահին նման հնարավորություն չունեցող ֆիրմաների հարաբերական գների միջև: Առաջին խմբի ֆիրմաների համար սա հանգեցնում է թողարկվող ապրանքի նկատմամբ պահանջարկի անկման, իսկ երկրորդ խմբի ֆիրմաների համար՝ պահանջարկի աճի: Ըստ էության հարաբերական գների նմանատիպ բաշխումը իր բնույթով շատ նման է արտադրողականության բացասական ցնցումի. հաշվի առնելով նվազող սահմանային արդյունքները՝ աշխատուժի վերաբաշխումը առաջին խմբի ֆիրմաներից երկրորդ խմբի ֆիրմաներ ենթադրում է աշխատուժի միջին արտադրողականության անկում: Այսինքն՝ նույն ծավալի արդյունքի արտադրությունը միջին հաշվով դառնում է առավել աշխատատար, հետևաբար

աճում են իրական աշխատավարձերը՝ տնտեսական գործունեությունը դարձնելով ծախսատար և ոչ արդյունավետ[8]:

Դրական երկարաժամկետ գնաճի ազդեցության մեկ այլ ուղղություն ներկայացվում է ֆիրմաների վերադիրների փոփոխության միջոցով[9]: Ճկուն գների պայմաններում գների վերադիրները կլինեն հաստատուն մեծություն՝ քանակական արտահայտությամբ ներկայացնելով ֆիրմաների մրցակցային դիրքը: Կոշտ գների և դրական գնաճի պայմաններում ժամանակի ընթացքում տեղի է ունենում գնային վերադիրի արժեքի անկում, հետևաբար սահմանային ծախսերին համապատասխան վերադիր ապահովելու համար ֆիրմաները ստիպված են գները վերանայելու հնարավորության դեպքում սահմանել բարձր հարաբերական գներ:

Դրական երկարաժամկետ գնաճի հետևանքների գնահատումը բաց տնտեսության պայմաններում դեռևս լայն տարածում չեն գտել մասնագիտական գրականության մեջ: Թերևս որպես նմանատիպ օրինակ կարելի է նշել Ֆերնանդես_Կորուզեդոյի աշխատանքը, որտեղ գնահատվել են գնաճի ոչ զրոյական մակարդակի հետևանքները բարեկեցության վրա բաց տնտեսության համատեքստում: Սույն աշխատանքը տարբերվում է վերը նշված վերլուծությունից այն տրամաբանությամբ, որ մի գնի օրենքից շեղման ենթադրությունը թույլ է տվել ներկայացնել նաև ներմուծվող ապրանքների գնագոյացման հավասարումը ոչ զրոյական գնաճի պարագայում, ընդ որում ըստ ենթադրության ներմուծող ֆիրմաները ապրանքների վերաբաշխման հետ կապված կրում են նաև աշխատուժի ծախսեր: Վերջիս նշանակում է, որ մակրոտնտեսական համակարգի վարքագիծը որոշվում է ինչպես տեղական, այնպես էլ ներմուծված ապրանքների գների հարաբերական ցրվածքով:

Աշխատանքի առաջին հատվածում ներկայացվել է մոդելի ընդհանուր նկարագրությունը: Այնուհետև երկրորդ հատվածում ամփոփվել են հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

Տնային տնտեսություններ.

Տնային տնտեսությունների ընդհանուր օգտակարության ֆունկցիան կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$E_0 \sum_{i=1}^{\infty} \beta^i (U(C_t, N_t))$ (1), որտեղ C_t – սպառման ինդեքսն է, N_t -ն աշխատուժի առաջարկը, ընդ որում $U(C_t, N_t) = \ln(C_t) - \frac{N_t^{1-\varphi}}{1-\varphi}$;

Առաջին կարգի անհրաժեշտ պայմանները կներկայացվեն հետևյալ տեսքով.

$$-\frac{U_{n_t}}{U_{c_t}} = \frac{W_t}{P_t} \quad (2)$$

$$R_{t,t+1} = \beta * E_t \left(\frac{U_{c_{t+1}}}{U_{c_t}} * \frac{P_t}{P_{t+1}} \right) \quad (3)$$

U_n , U_c համապատասխանաբար աշխատանքի սահմանային անօգտակարությունն է և սպառման սահմանային օգտակարությունը, W -ն անվանական աշխատավարձն է, P -ն գների մակարդակը, R -ը ստոխաստիկ դիսկոնտավորման գործակիցն է:

Ընդհանուր սպառումը ներկայացվում է հաստատուն փոխարինման առաձգականությամբ ֆունկցիայի տեսքով.

$$C_t = [(1 - \alpha)^{1/\eta} C_{h_t}^{1-1/\eta} + \alpha^{1/\eta} C_{im_t}^{1-1/\eta}]^{1/(1-\frac{1}{\eta})} \quad (4)$$

C_h և C_{im} համապատասխանաբար երկրի ներսում և արտերկրում արտադրված ապրանքների սպառումն է, η -ն այդ ապրանքների միջև փոխարինման առաձգականության գործակիցն է, α -ն երկրի բացության աստիճանը բնութագրող գործակիցը:

Սպառման օպտիմալ բաշխումը ապրանքների խմբերի միջև հանգեցնում է պահանջարկի հետևյալ ֆունկցիաներին.

$$C_{h_t} = (1 - \alpha) * \left(\frac{P_{h_t}}{P_t} \right)^{-\eta} * C_t \quad (5)$$

$$C_{im_t} = \alpha * \left(\frac{P_{im_t}}{P_t} \right)^{-\eta} * C_t \quad (6)$$

Որտեղ P , P_h և P_{im} -ը սպառողական ապրանքների, ներքին տնտեսության և ներմուծված ապրանքների գների ինդեքսներն են, ընդ որում

$$P_t = ((1 - \alpha) * P_h^{1-\eta} + \alpha * P_{im}^{1-\eta})^{1/1-\eta} \quad (7)$$

Իրական, անվանական փոխարժեքները, շեղումը գնողունակության պարիտետից.

t պահին անվանական փոխարժեքը նշանակենք Ner_t -ով: Առևտրի պայմանները և իրական փոխարժեքը համապատասխանաբար սահմանվում է հետևյալ կերպ.

$$Tot_t = \frac{P_{im_t}}{P_h_t} \quad (8)$$

$$Rer_t = Ner_t * \frac{P_{f_t}}{P_t} \quad (9), \text{ որտեղ } P_f \text{ արտերկրի գների մակարդակն է:}$$

Սահմանափակ փոխանցման պայմաններում (incomplete pass-through) մի գնի օրենքը չի պահպանվում, հետևաբար առաջանում է շեղում ներմուծվող ապրանքների համաշխարհային և տեղական արժույթով արտահայտված գների միջև.

$$Lop_gap_t = \frac{Ner_t * P_{f_t}}{P_{im_t}} \quad (10)$$

Միջազգային ֆինանսական շուկաներ.

Կատարյալ միջազգային ֆինանսական շուկաների և կապիտալի ազատ տեղաշարժի ենթադրության պայմաններում նմանատիպ արժեթղթերի գինը արտահայտված միևնույն արժույթով արտերկրում և ներքին տնտեսության մեջ պետք է լինի նույնը, այսինքն՝

$$R_t = R_{f_t} * E_t \left(\frac{Ner_t}{Ner_{t+1}} \right) \quad (11), \text{ որտեղ } R_{f_t} \text{ը ստոխաստիկ դիսկոնտավորման գործակիցն}$$

է արտերկրում:

Հետևաբար արտերկրի սպառողների օպտիմալության պայմանները կարող են ներկայացվել հետևյալ տեսքով.

$$\beta * \left(\frac{U_{c_{f_{t+1}}}}{U_{c_{f_t}}} \right) * \left(\frac{P_{f_t}}{P_{f_{t+1}}} \right) * \left(\frac{Ner_t}{Ner_{t+1}} \right) = R_{t,t+1} \quad (12), \text{ որտեղ } U_{c_f} \text{-ը սպառման սահմանային}$$

օգտակարությունն է արտերկրում:

(3)-ից և (12)-ից ստացվում է սպառման սահմանային օգտակարությունների միջև հետևյալ առնչությունը.

$$U_{c_t} * Rer_t = g * U_{c_f_t} \quad (13)$$

Որտեղ g -ն հաստատուն մեծություն է և բնութագրում է հարստության նախնական բաշխումը:

Ֆիրմաներ.

Տնտեսության մեջ առկա են մենաշնորհային մրցակցության միջավայրում գործող մեծ քանակի ֆիրմաներ, որոնք բնութագրվում են հետևյալ արտադրական ֆունկցիայի միջոցով.

$$Y_t(i) = A_t * N_t(i) \quad (14)$$

Y -ը և N -ը ֆիրմայի թողարկումն է և աշխատուժը, A -ն տնտեսության ընդհանուր արտադրողականությունն է, որը տվյալ դեպքում դիտարկվում է արտաձին փոփոխական և ներկայացվում է ավտոռեգրեսիվ գործընթացի տեսքով:

Ծախսերի նվազեցումը ֆիրմաների կողմից հանգեցնում է աշխատուժի պահանջարկի հետևյալ պայմանին.

$$MC_{h_t} = \frac{W_t}{A_t * P_{h_t}} \quad (15),$$

MC_{h_t} -ը տեղական ֆիրմաների սահմանային ծախսերն են:

Գնագոյացման գործընթացներ.

Յուրաքանչյուր ֆիրմա, գործելով մենաշնորհային մրցակցության միջավայրում, սահմանում է գների համապատասխան մակարդակ՝ հաշվի առնելով անվանական կոշտությունները: Ինչպես աշխատանքների մեծ մասում, այս դեպքում ևս ենթադրվում է, որ ֆիրմաները հետևում են գների սահմանման Կալվոի գործընթացին: Ֆիրմաները, ըստ էության, լուծում են մաքսիմալացման հետևյալ խնդիրը.

$$Max E_t \sum_{j=0}^{\infty} \theta_{h^j} * R_{tt+j} \left(\frac{P_{h_t}^{op}(i)}{P_{h_{t+j}}} * Y_{t+j}(i) - TC_{t+j}^{real}(Y_{t+j}(i)) \right) \quad (16)$$

Հետևյալ պայմանների դեպքում.

$$Y_{t+j}(i) = \left[\frac{P_{h_t}^{op}(i)}{P_{h_{t+j}}} \right]^{-\varepsilon} * Y_{t+k}^d \left(P_{h_t}^{op}(i) \right) \quad (17)$$

TC_{t+j}^{real} -ը իրական ընդհանուր ծախսերի ֆունկցիան է, θ_h -ն անվանական կոշտությունները բնութագրող գործակիցը, R_{tt+j} -ստոխաստիկ դիսկոնտավորման գործակիցն է, որը ներկայացվում է (3)-ի տեսքով:

Վերը նշված խնդրի լուծումը հանգեցնում է օպտիմալ գնի համար հետևյալ արտահայտությանը.

$$P_h^{op}(i) = \frac{\varepsilon}{\varepsilon-1} * \frac{E_t \sum_{j=0}^{\infty} \theta_h^j * R_{tt+j} * (P_{h_{t+j}}^\varepsilon * Y_{t+j} * MC_{h_{t+j}}(i))}{E_t \sum_{j=0}^{\infty} \theta_h^j * R_{tt+j} * (P_{h_{t+j}}^{\varepsilon-1} * Y_{t+j})} \quad (18)^1$$

Հետևաբար օպտիմալ հարաբերական գների համար տեղի ունի.

$$\frac{P_h^{op}(i)}{P_h} = \frac{\varepsilon}{\varepsilon-1} * \left(\frac{K_h}{L_h} \right) \quad (19)$$

Ընդ որում՝

$$K_h = E_t \sum_{j=0}^{\infty} (\beta * \theta_h)^j * R_{tt+j} * \left(\left(\frac{P_{h_{t+j}}}{P_h} \right)^\varepsilon * Y_{t+j} * MC_{h_{t+j}}(i) \right) \quad (20)$$

$$L_h = E_t \sum_{j=0}^{\infty} (\beta * \theta_h)^j * R_{tt+j} * \left(\left(\frac{P_{h_{t+j}}}{P_h} \right)^{\varepsilon-1} * Y_{t+j} \right) \quad (21)$$

Որտեղ ε -ը տարբեր ապրանքների միջև փոխարինման առաձգականությունն է:

Մյուս կողմից տնտեսության ներքին արտադրության ապրանքների գների համար ճիշտ է հետևյալը.

$$\left(\frac{P_h}{P_{h_{t-1}}} \right)^{1-\varepsilon} = \theta_h + (1 - \theta_h) * \left(\frac{P_h^{op}}{P_{h_{t-1}}} \right)^{1-\varepsilon} \quad (22)$$

(19) և (22) միասին որոշում են տեղական ապրանքների գնաճի հավասարումը:

Ներմուծվող ապրանքների գնագոյացման գործընթացներ.

¹ Աշխատանքում կառուցվածքային պարամետրերը չափաբերված են այն տրամաբանությամբ, որ (18) հավասարումը կայուն վիճակում զուգամիտի որոշակի լուծման

Ներմուծող ֆիրմաները ևս գործում են մենաշնորհային մրցակցության պայմաններում՝ հետևելով գնագոյացման Կալվոյի մեխանիզմին: Ներկա աշխատանքում ենթադրվել է, որ ներմուծման ապրանքների վերաբաշխման ընթացքում առկա են աշխատուժի ծախսեր[1]: Նման մոտեցման պարագայում աշխատուժի պահանջարկի շարժերը կբնութագրվեն ոչ միայն տեղական ֆիրմաների այլ նաև ներմուծող ֆիրմաների հարաբերական գների ցրվածքի դինամիկայով: Այսպիսով ներմուծող ֆիրմայի համար ամբողջական ծախսերը կներկայացվեն հետևյալ տեսքով.

$$TC_{im}(i)_t = Ner_t * P_{f_t} * C_{im}(i)_t + W_t * N(i)_t \quad (23)$$

Ներմուծող ֆիրմաները լուծում են մաքսիմալացման հետևյալ խնդիրը.

$$Max E_t \sum_{j=0}^{\infty} \theta_{im}^j * R_{tt+j} \left(\frac{p_{im}^{op}(i)}{P_{im_{t+j}}} * C_{im_{t+j}}(i) - TC_{t+j}^{real}(C_{im_{t+j}}(i)) \right) \quad (24)$$

Հետևյալ սահմանափակման դեպքում.

$$C_{im_{t+j}}(i) = \left[\frac{P_{im}^{op}(i)}{P_{im_{t+j}}} \right]^{-\varepsilon} * C_{im_{t+k}}^d (P_{im}^{op}(i)) \quad (25),$$

Ներմուծվող ապրանքների գնաճի հավասարումը կառուցվում է նույն տրամաբանությամբ, ինչպես տեղական ապրանքների համար:

Տեղական և ներմուծվող ապրանքների գների ցրվածքը.

Գների ցրվածքը տեղական և ներմուծված ապրանքների համար ներկայացվում է հետևյալ տեսքով.

$$D_{j_t} = \int_0^1 \left(\frac{P_{j_t}(i)}{P_{j_t}} \right)^{-\varepsilon} di \quad (26), \text{ որտեղ } j=h,im$$

Այն զրոյական գնաճի պայմաններում առաջին կարգի մոտարկմամբ ունի զրոյական արժեք: Այդուհանդերձ երկարաժամկետ հատվածում ոչ զրոյական գնաճը ենթադրում է նաև գների ցրվածքի որոշակի աստիճան, քանի որ անվանական կոշտությունների պարագայում հարաբերական գները տարբեր են տարբեր ֆիրմաների համար. դրանք առավել բարձր են գները վերանայող կազմակերպությունների և ցածր վերանայելու հնարավորություն չունեցող

կազմակերպությունների համար: Հարաբերական գների ցրվածքը ներկայացվում է հետևյալ տեսքով.

$$D_j = \int_0^1 \left(\frac{P_{jt}(i)}{P_{jt}}\right)^{-\varepsilon} di = (1 - \theta_j) * \left[\frac{P_{jt}^{op}(i)}{P_{jt+j}}\right]^{-\varepsilon} + \theta_j * (1 - \theta_j) * \left[\frac{P_{j_{t-1}^{op}(i)}}{P_{jt+j}}\right]^{-\varepsilon} + \theta_j^2 * (1 - \theta_j) * \left[\frac{P_{j_{t-2}^{op}(i)}}{P_{jt+j}}\right]^{-\varepsilon} + \dots = (1 - \theta_j) * \left[\frac{P_{jt}^{op}(i)}{P_{jt+j}}\right]^{-\varepsilon} + \theta_j * \pi_{jt}^{-\varepsilon} * D_{j_{t-1}} \quad (27)$$

Ինչպես արդեն նշվել է, գների անհավասարաչափ բաշխումը ամբողջական արդյունքի արտադրությունը դարձնում է ոչ արդյունավետ և ծախսատար: Վերջինս կարելի է ներկայացնել հետևյալ տրամաբանությամբ.

$$N_t = \int_0^1 N(i)_t di = \int_0^1 \frac{Y(i)_t}{A_t} di \quad (28) \text{ (հաշվի առնելով 14-ը), հետևաբար տեղի ունի } ^\`$$

$$N_t = \frac{Y_t}{A_t} * D_t \quad (29), \text{ որտեղ } D = D(D_{im}, D_h);$$

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային քաղաքականությունը իրականացվում է Թեյլորի կանոնի միջոցով, որի դեպքում արձագանքման ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$i_t = i_{t-1}^{\rho_i} * \left(\frac{\pi_t}{\pi}\right)^{\rho_\pi} \quad (30)^2, \text{ որտեղ } \pi_t = \frac{P_t}{P_{t-1}}$$

Հավասարակշռություն

Հավասարակշռության պայմանը ենթադրում է սպրանքային և աշխատուժի շուկաների մաքրում: Բաց տնտեսության համար հավասարակշռության պայմանը հանգում է սպառման և եկամտի հետևյալ առնչությանը.

$$Y_t = C_h_t + C_{h_f}_t \quad (31), \text{ որտեղ } C_{h_f}_t \text{ տեղական սպրանքների սպառումն է արտերկրում (կամ այլ կերպ արտահանումը), որը որոշվում է հետևյալ կերպ.}$$

$$C_{h_f}_t = \alpha * \left(\frac{P_{h_t}}{N_{e_t} * P_{f_t}}\right)^{-\eta} * C_{f_t} \quad (32), \text{ } C_{f_t} \text{ արտերկրի սպառումն է:}$$

² $i = (1/R) - 1$

Արտաքին հատված

Արտաքին հատվածի բոլոր փոփոխականները դիտարկվել են արտաձին և ներկայացվել պարզագույն ավտոռեգրեսիվ գործընթացների տեսքով:

Վարքագծային պարամետրերը և մոդելի լուծումը.

Մոդելի գործակիցների չափաբերման համար հիմք են հանդիսացել ընդհանուր հավասարակշռության մոդելներում առավել հաճախակի դիտարկող պարամետրերի համապատասխան արժեքները: Կենտրոնական բանկի արձագանքման ֆունկցիայում փոփոխականների շեղումների համապատասխան գործակիցների արժեքների ընտրությունը կատարվել է մոդելի լուծման միակության ապահովման համար: Մասնավորապես գնաճի երկարաժամկետ մակարդակից շեղման արձագանքի գործակիցը ընդունվել է 2.5-ին հավասար: Գործակցի արժեքի նման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկարաժամկետում գնաճի դրական մակարդակի պարագայում արձագանքման ֆունկցիայի գործակիցների միջև հայտնի առնչությունը(այլ կերպ ասած «Թեյլորի կանոնը») չի պահպանվում[2]: Մոդելի լուծումն իրականացվել է կայուն վիճակի շուրջ առաջին կարգի մոտարկմամբ, ընդ որում կայուն մակարդակում դիտարկվել է գնաճի 5% մակարդակ³:

Աղյուսակ 1.

ε	β	φ	α	η	θ_{im}	θ_h	ρ_i	ρ_π
9	0.998	3.5	0.35	0.4	0.35	0.55	0.8	2.5

Մոդելի անցումային դինամիկան

Մոդելի անցումային դինամիկան ներկայացնում է փոփոխականների արձագանքը տարբեր ցնցումներին: Դիտարկվել են ներքին տնտեսության ցնցումների ազդեցությունը մի շարք փոփոխականների վարքագծի վրա(Գծանկար 1-5):

³ Ենթադրվում է, որ կայուն վիճակում մի գնի օրենքը պահպանվում է, հետևաբար ներմուծման և տեղական ապրանքների գնագոյացման հավասարումները գծայնացվել են գնաճի միևնույն մակարդակի շուրջ:

Ոչ զրոյական գնաճի ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների և դրամավարկային քաղաքականության վրա.

Ներկա հատվածում ներկայացված են երկարաժամկետում դրական գնաճի ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների դինամիկայի, այդ փոփոխականները բնութագրող ցուցանիշների վրա:

ա. Երկարաժամկետ հատվածում գնաճի դրական մակարդակի դեպքում փոփոխականների արձագանքը գնաճային ցնցումներին քանակապես մեծանում է:

Գծանկար 7 և 8 -ում ներկայացված են հիմնական փոփոխականների արձագանքը ներքին տնտեսության և ներմուծված ապրանքների գնաճի ցնցումներին գնաճի զրոյական և տարեկան 5% պայմաններում: Միավոր ցնցումի պարագայում անվանական տոկոսադրույքի առավել մեծ աճը դրական գնաճի պարագայում պատճառ է հանդիսանում մնացած ներծին փոփոխականների երկարաժամկետ մակարդակից շեղումների խորացման՝ գնաճը թիրախային մակարդակին վերադարձնելու համար: Գնաճային ցնցումների պարագայում տնտեսության անհաշվեկշռվածությունները խորանում են , ինչը բնական է, եթե հաշվի առնենք, որ տվյալ դեպքում դիտարկվում է հարաբերական գների բացարձակ արժեքով մեծ ցրվածք:

բ. Երկարաժամկետ հատվածում գնաճի դրական մակարդակը հանգեցնում է փոփոխականների տատանողականության աճի և, հետևաբար նաև մակրոտնտեսական անկայունության մեծացման:

Այս տեսանկյունից բարդանում է կենտրոնական բանկի կողմից տարբեր ցնցումների հետևանքով առաջացող տնտեսական անկայունության հարթումը: Պատճառը հարաբերական գների անհամաչափ բաշխումն է, որի քանակական հետևանքներն աճում են գնաճի մակարդակին զուգահեռ: Գծանկար 9-ում ներկայացված են իրական փոխարժեքի, ամբողջական արդյունքի, տեղական և ներմուծված

ապրանքների գնաճի տատանողականությունը բնութագրող ստանդարտ սխալները գնաճի՝ կայուն վիճակում տարբեր մակարդակների պարագայում:

գ. Երկարաժամկետ հատվածում գնաճի դրական մակարդակի հետևանքով նվազում է դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի աշխատունակությունը:

Փոխանցումային մեխանիզմի աշխատունակության վատթարացումը կարելի է բացատրել հետևյալ տրամաբանությամբ. զրոյական գնաճի դեպքում ֆիրմայի շահույթը որոշող հիմնական գործոնը սպասվող սահմանային ծախսերի փոփոխությունն է, հետևաբար կենտրոնական բանկը քաղաքականության գործիքների միջոցով ազդելով պահանջարկի վրա՝ հնարավորություն ունի ուղղորդելու ֆիրմայի վարքագիծը գնաճի վրա անհրաժեշտ ազդեցություն թողնելու համար: Երկարաժամկետ գնաճի դրական մակարդակի դեպքում ֆիրմայի որոշումները կախված են հենց գնաճի դինամիկայից, քանի որ վերջինս փոխում է հարաբերական գները և ազդում վերադիրների վրա, որի արդյունքում շահույթի և, հետևաբար ողջ գնագոյացման մեխանիզմի զգայունությունը սահմանային ծախսերի և տնտեսական իրավիճակի փոփոխականների նկատմամբ նվազում է: Ընդ որում փոխանցումային մեխանիզմի թուլացումը վերաբերում է ոչ միայն պահանջարկի անուղղակի կարգավորմանը, այլ նաև ուղղակի՝ անվանական փոխարժեքի միջոցով գնաճային միջավայրի վրա ներգործության մեխանիզմին: Այս հանգամանքը ներկայացված է Գծանկար 10-ում գնաճի ցուցանիշների, սահմանային ծախսերի և փոխարժեքի միջկորելիացիոն ֆունկցիաների տեսքով: Գնաճի երկարաժամկետ մակարդակի աճին զուգընթաց վերը նշված փոփոխականների միջև կորելիացիոն կապերը նվազում են՝ սահմանափակելով կենտրոնական բանկի՝ վերջնական նպատակի իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը:

Ե. Երկարաժամկետ հատվածում գնաճի դրական մակարդակի հետևանքով նվազում է հիմնական փոփոխականների՝ համապատասխան կայուն արժեքներին զուգամիտման արագությունը:

Այս հանգամանքը պարզ երևում է Գծանկար 11-ում ներկայացված գնաճի և ՀՆԱ-ի համար հաշվարկված սպեկտրալ խտության ֆունկցիաների գրաֆիկներից: Երկարաժամկետ հատվածում դրական գնաճի պարագայում երկու շարքերի տատանողականության մեջ աճում է ցածր հաճախականությամբ ալիքների նպաստումը, ինչը նշանակում է, որ միավոր ցնցումի պարագայում ավելի երկար ժամական կպահանջվի էնդոգեն փոփոխականների անհաշվեկշռվածությունները հարթելու համար: Պատճառը գների ցրվածքը ներկայացնող փոփոխականների իներցիոն բնույթն է, որը փոխանցվում է համակարգի մնացած փոփոխականներին՝ ապահովելով կառուցվածքային կայունության որոշակի մակարդակ:

Եզրակացություններ

Սույն աշխատանքում դիտարկվեցին երկարաժամկետ հասվածում ոչ զրոյական գնաճի ազդեցության հնարավոր ուղղությունները մակրոտնտեսական փոփոխականների և դրամավարկային քաղաքականության իրականացման վրա: Այդ նպատակով ներկայացվեց բաց տնտեսության ընդհանուր հավասարակշռության մոդելը կառուցված գնաճի դրական երկարաժամկետ մակարդակի ենթադրությամբ:

Դրական գնաճը էականորեն ազդում է մոդելի դինամիկայի, տատանողականության և դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից առավել կարևոր փոփոխականների վարքագծի վրա: Հետևաբար գնաճի դրական որևէ մակարդակի թիրախավորում իրականացնելիս կենտրոնական բանկը պետք է հաշվի առնի քաղաքականության իրականացման հնարավոր խոչընդոտները և բարդությունները:


Ներկայացված մոդելը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել քաղաքականության փոխանցումային մեխանիզմի և թիրախավորված գնաճի՝ դրա վրա ունեցած ազդեցության մասին: Այդուհանդերձ, կայուն գնաճի հետևանքների լիարժեք ներկայացումը պահանջում է գնահատել կառուցվածքային այլ պարամետրերի հնարավոր փոփոխությունները: Այս համատեքստում հատկապես կարևորվում է գնային կոշտությունների հնարավոր փոփոխությունները գնաճի թիրախային արժեքի փոփոխություններին ի պատասխան:

Օգտագործված գրականություն


1. Ա. Մկրտչյան, 2009, Փոքր բաց տնտեսության մակրոմոդել Հայաստանի Հանրապետության տնտեսության համար, ՀՀ ԿԲ աշխատանքային փաստաթուղթ
2. G. Ascari, T. Ropele, 2005, Trend Inflation, Taylor Principle and Indeterminacy, Quaderni di Dipartimento #178 (10-05), Dipartimento di Economia Politica e Metodi Quantitativi, University of Pavia.
3. R. Amano, S. Ambler, N. Rebei, 2005. The macroeconomic effects of non-zero trend inflation. Bank of Canada, Mimeo.
4. T. Yun, 1996. Nominal Price Rigidity, Money Supply Endogeneity and Business Cycles. Journal of Monetary Economics 37: 34570.
5. T. Yun, 2005, Optimal monetary policy with relative price distortions, The American economic Review, Vol95, No. 1, pp89-109.
6. A. Wolman, 2001. “A Primer on Optimal Monetary Policy with Staggered Price-Setting.” Federal Reserve Bank of Richmond Economic Quarterly 87 (4): 27–52.
7. A. Wolman, 1999, Sticky prices, marginal cost, and the behavior of inflation, Economic Quarterly, Federal Reserve Bank of Richmond, issue Fall, pages 29-48.
8. T. Damjanovic, C. Nolan 2006, ‘Relative Price Distortions and Inflation Persistence’, ‘Centre for dynamic macroeconomic analysis’, CDMA06/11
9. Steve Ambler 2007. The Costs of Inflation in New Keynesian Models, BANK OF CANADA REVIEW
10. Schmitt-Grohé, S. and M. Uribe 2004. Optimal simple and implementable monetary and fiscal rules. NBER wp. 10253.
11. Clarida, R., J. Gali and M. Gertler 2001, Optimal monetary policy in open versus closed economies: An integrated approach, American Economic Review, 91, 253-257.
12. M. Woodford, 2003, Interest and Prices: Foundations of a Theory of Monetary Policy, Princeton: Princeton University Press.

Հավելված1.


Գծանկար 1 .Ներքին տնտեսության սպառման ցնցում.




Գծանկար 2.Ներքին տնտեսության տոկոսադրույքի ցնցում.




Գծանկար 3.Ներքին տնտեսության ապրանքների գնաճի ցնցում.



Գծանկար 4.Ներմուծված ապրանքների գնաճի ցնցում.




Գծանկար 5. Արտադրողականության ցնցում.




Հավելված 2.


Գծանկար 7. Ներքին տնտեսության ապրանքների գնաճի ցնցում.




Գծանկար 8. Ներմուծված ապրանքների գնաճի ցնցում.




Գծանկար 9. Մակրոտնտեսական փոփոխականների տատանողականությունը.



Գծանկար 10. Մակրոտնտեսական փոփոխականների միջկորելիացիոն կապերը.



Cross correlation of domestic inflation and marginal cost



Գծանկար 11. Գնաճի և ՀՆԱ-ի սպեկտրալ խտության ֆունկցիաները երկարաժամկետ հատվածում գնաճի 0% և 5% պայմաններում.



